

ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ



– Հաֆ-հաֆ: – Պի-պի-պի:
– Մյառու-մյառու, –
տնքտնքում էին
կենդանիները:

Իսկ արջուկը փախավ,
թաքնվեց թփերի մեջ ու
սկսեց լաց լինել:

– Ինչո՞ւ ես լաց լինում,
– հարցրեց նրան փոքրիկ
զատիկը:

– Ես նեղացրել եմ
կենդանիներին ու հիմա էլ
ընկերներ չունեմ ու
երբեք չեմ ունենա, – ու
արջուկն ավելի ուժեղ
սկսեց լաց լինել:


– Մի տխրի: Պետք է պարզապես ասել. «ներեցեք»: Քո ընկերները քեզ
կներեն ու ամեն ինչ լավ կլինի:

Արջուկն այդպես էլ արեց:

Մի անգամ կենդանիները
բռնոցի էին խաղում:
Մկնիկը բռնում էր
փսիկին ու շնիկին, իսկ
նրանք ուրախ փախչում
էին:

– Ես էլ եմ ուզում
խաղալ, – ասաց արջուկը:
Նրան ևս մտցրեցին խաղի
մեջ:

Բայց արջուկը անշնորհք
էր: Մեկ փսիկի վրա էր
ընկնում, մեկ մկնիկին էր
հրում, մեկ շնիկի թաթն
էր տրորում:



– Ներեցեք ինձ, ընկերներ, - քաղաքավարի խնդրեց նա:

Ու կենդանիները նրան ներեցին: Խաղը վերսկսվեց: Արջուկն ավելի
ուշադիր դարձավ ու այլևս ոչ ոքի չէր անհանգստացնում:

